

№ 3 ИСКРА 1892

№ 3

Յիսուս տաճարի մէջ տրտաքսում է վաճառողներին (պատկեր)	
Ծաղկազարդ	Ն.
Նաւակ (ոտանաւոր)	Ե. Պալեան
Մխիթար (վէպիկ)	Մ ի թ
Սերբական տիպեր (պատկեր)	
Տատանոզիր մանկան (ոտանաւոր)	Ալ. Յար.
Մարտ	Պետ Պուշկանց
Սուրբ Խաչն ինձ պաշտպան (ոտանաւոր)	Հ. Թ.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Հիպօպոտամ (պատկերով)	Ն.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարաւային Ամերիկայում պինամիսի զրօծածութիւն հոդ հերկելուն. Կաթի և դարիչքի թանձրացնելը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

Չիկագոյի համալսարանի հոգարարձ. նախապատարաստութիւնը։ Չիկագոյի համաշխարհ. ցուցահանդէսի հրաշալիքներից մէկը։ Մանկարժ. նոր Աֆօս Կոմկնակու ծնընդեան 300 ամեակի տօնակատարութիւնը։

ԶԻԱՐՁԱԿԻՔ

Հանելուկներ	Աւագարկ. օր. Հ. Մ.-ի
„	„ Ա. Սարգսյ.

ԽՆԴԻՐ

* * *	Աւագարկ. Զ. Ս.

Սուրհանդակ, Խմբագրութիւնից և Հայտարարութիւններ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Խնդրում ենք „Աղբիւր“ և „Տարազ—Աղբիւր“ ի միասին առաւելոց բաժանորդներին, որ մեզ հրամայեն „Աղբիւրի“ № 2 երկու անգամ ևս ուղարկել, բաւարարելու մեզ վերադարձնել առնորոշ համարները։

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՆԻ

ՅԱՒԵԼՒԱԾՈՎ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՆԱՒՐԱՐՊ ՏԱՐԻ

№ 3

ՄԱՐՏ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Ռուբեստիթեակայա փողոցում.
1892

Յիսուս տաճարի մէջ արտարտում՝
է վաճառողները

ՅԱՅԿԱԶԱՐԴ

Երջին անգամ երբ Յիսուս աշակերտների հետ գնում էր Երուսաղէմ, երբ որ մօտեցան Զիթենեաց սարին, իր աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. գնացէք, ձեր առաջին մի գիւղ կայ, հէնց որ մտնէք այնտեղ, կըգտնէք մի կապած աւանակ, որի վրայ ոչ ոք նստած չէ. արձակեցէք նրան և բերէք: Եթէ մէկը ձեզ հարցնի թէ՝ ինչո՞ւ էք արձակում աւանակին, կասէք, որ իր Տիրոջը պէտք է և շուտով նրան այստեղ կը ղրկէ: Գնացին և գտան աւանակը դուրսը, փողոցում, դրան մօտ կապած և արձակեցին նրան: Այնտեղ կանգնածներից ոմանք ասացին նրանց. ինչ էք անում, ինչի՞ էք արձակում աւանակը: Եւ նրանք ասացին նրանց ինչպէս որ պատուիրել էր Յիսուս և նրանք թոյլ տուին: Բերին աւանակը Յիսուսի մօտ.

վրան ձգեցին շորեր և նա նստեց նրա վրայ: Շատերն էլ իրանց հանդերձները ճանապարհին փռում էին, ուրիշներն էլ ծառերից ճիւղեր էին կտրում և ճանապարհին փռում: Եւ առջևից դնացողները և ետևից եկողներն աղաղակում և ասում էին. „Օրհնեալ է որդի աւուրով նկող թագաւորը“:

Երբ որ մօտեցաւ, տեսաւ քաղաքը, լաց եղաւ նրա վրայ և ասաց. „օրեր կըգան քեզ վրայ, թշնամիներդ քո շուրջդ պատնէշ կըկապեն, կըպաշարեն քեզ եւ ամեն կողմից կը նեղացնեն քեզ:“

Եկան Երուսաղէմ և Յիսուս մտաւ տաճարը. սկսեց դուրս հանել տաճարից առևտուր անողներին, կործանեց ստակ փոխողների սեղանները և աղաւնի ծախողների աթոռները: Եւ չէր թողնում, որ մէկը մի անօթ անցկացնէ տաճարի միջով: Ու նրանց սովրեցնում էր և ասում. „գրած է իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի ձեռ դուք առւազակների այր էք շինել նրան:“

Յիսուսի Երուսաղէմ մտնելու յիշատակի հանդէսը մենք կատարում ենք Ծաղկազարդին, որ այս տարի, այս ամսի 29-ին է դալիս: Վերև յիշած ծառերի ճիւղերի յիշատակին մեղ էլ եկեղեցում բաժնում են ու-

ռի ծառի ճիւղեր, վասնզի ուռի ծառն ամբողջ Հայաստանի ամեն տեսակ կլիմայ ունեցող գաւառում բնում է, և տարւայ այդ եղանակին արդէն կանաչած է լինում:

Մի քանի տեղ էլ վերև յիշած ցնծութեան աղաղակը ներկայացնելու համար մանուկները ճոնչեցնում են ճուռան կոչած խաղալիկները:

Մեր սիրտը և մեր խորհուրդները պիտի մաքուր և սուրբ լինին, ինչպէս Աստուծոյ տաճարը:

Ն.

Ն Ա Հ Ա Կ

ուլթ կէս գիշերին՝ խոր ծովի վրայ
Կուտակւում էին սեւ սեւ ալիքներ,
Ձայնում էր փոթորիկ
Ատելի ապառնալիք,
Գալարւում էին պղտոր յորձանքներ։

Մուլթ կէս գիշերին՝ խոր ծովի վրայ
Սեւ կէտի նման խիստ տատանւելով
Լողում էր առաջ մի փոքրիկ նաւակ
Թանձր ջրերը պատառոտելով.
Եւ զոյգ թիերը ուժով, միաբան
Շարժւում էին այն խոր մթութեան մէջ...

Եւ մոնչում էր
Անզուսպ, կատաղի
Ծովը ալեկօծ,
Եւ քաղխում էին
Անզուլթ ալիքներ...

Բայց կէս գիշերին խոր ծովի վրայ
Լողում էր անվախ մի փոքրիկ նաւակ...
Լողում էր առաջ... արհամարհելով
Ամէն արհաւիրք եւ զոյգ թիերը
Պատառում էին միաբան ոյժով
Թանձր ջրերը...

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

Մ Ի Ր Ի Ա Մ

Վ Ի Պ Ի Կ

(Հին Բաբելոնական կեանքից)

Ննջելով հին Ենինւէի խորքերում գտած հնութիւնները եւ այնտեղից բերած մեր թանգարաններում դրած քանդակագործութիւնները՝ զարմանք է տիրում մեզ. հիանում ենք նոյնպէս կարդալով Բաբելոնա-ասորական գիտնական հեղինակութիւնները՝ փորագրած թրծած աղիւսների վրայ: Այդ երկրի խորքից լոյս աշխարհ հանած գանձերին ենք պարտական, որ մենք մի քիչ տեղեկութիւն ունինք նախապատմական անցեալի մասին եւ դրանց վրայ է հիմնուած այս վէպիկը:

* * *

արուզողոնոսորի իշխանութեան ժամանակ, Բաբելոնական թագաւորութիւնը դարձաւ Ասիայում գտնուած առաջնակարգ տէրութիւններից մինը: Երուսաղէմը նուաճելուց առաջ, 588 թուին Քրիստոսից առաջ, Նաբուզողոնոսորը տիրեց Նինուէին, եւ այդպիսով կործանեց Միդիացւոց այն գերիշխանութիւնը, որն ունէին Ասորեստանցոց վրայ. յետոյ նա յաղթեց Փիւնիկեցոց, իսկ 583 թուին, Քրիստոսից առաջ, Եգիպտացոց: Պատերազմից յետ դառնալով իր մայրաքաղաք Բաբելոնը, սկսեց հոգալ երկրի բարւոքման, վաճառականութեան եւ արդիւնաբերութեան բարգաւաճման մասին: Բոլոր տաճարներից իր շքեղութեամբ եւ մեծութեամբ, աչքի էր ընկնում այն տաճարն, որը շինած էր ի պատիւ Բահաղ աստուծոյ: Իստարի սիրոյ աստուածուհու տաճարն եւս շատ գեղեցիկ էր. բայց իսկական հրաշք համարւում էր թագաւորի պալատը՝ իր կախեալ պարտէզներով. այնտեղ բերւեցան այն բոլոր գանձերը, որը ճեռք էր բերած Երուսաղէմի նուաճման ժամանակ: Իսկ առանձին ամբացրած սենեակում՝ դնւած էր գերի՝ Հրէից թագաւոր Իսախին: Գերած հրէաներից շատերը սկսեցին վաճառականութեամբ պարապել, իսկ մի մասը մնաւ թագաւորական ծառայութիւն եւ ճեռք բերեց բարձր պաշտօններ. ահա այդ էր պատճառը, որ յետագայ սերունդը գերութիւնից յետոյ եւս այնտեղ մնաց:

* * *

Եփրատի ափին կառուցած Հրաշալի քաղաքում տիրում էր կենդանութիւն: Շեթաթ ամիսն էր, որի պատճառով սկսել էին տօնախմբութիւնները, ի միջի այլոց եւ վաճառումն աղջիկների, որոնք ծախւում էին հուկայում՝ աճուրդով: Այդ հին սովորութիւնը պահպանել էր Բաբելոնի ստորին դասակարգի մէջ: Աճուրդը լինում էր հուկայում: աղջիկները նստած էին կիսաշրջանաձեւ, իսկ նրանց առաջ կանգնած էր վաճառողը: Ամենից առաջ ցոյց էին դրւում գեղեցկուհիները եւ ծախւում էին ամենից շատ փող տւողին:

Ժողովուրդն իր քայլերն ուղղում էր ամենահետաքրքրական տեղը, եւ ահա նա կանգ առաւ Իստարու հուկայի վրայ, ուր եւ գտնւում էր Իստարու աստուածուհու արձանը. հէնց այդ ժամանակ սկսել էր վաճառումը: Ժողովուրդի կանգնելու գլխաւոր պատճառը մի աղջկայ ձայն էր, որ օգնութիւն էր կանչում:

—Թողէք ինձ, լսւում էր կանացի ձայնը, ես ձեր ցեղիցը չեմ, ես Յուդայից գերի բերւած քուրմի դուստրն եմ:

—Շուկայ տանել դրան, շուկայ, մի՛թէ դա մեր աղջիկներից լաւ է. ամուր բռնեցէք, լսւում էին վայրենի ձայներ:

—Ո՛վ Ադոնայի տէր, փրկի՛ր ինձ, ով իմ հայրերի աստուած, պաշտպանիր ինձ, բացագանչեց աղջիկը՝ իսպառ յուսաբեկ:

—Նա հայհոյում է Բահադին, վրայ բերեց մոլեռանդ քաբելացին:

Աղջկայ շուրջը գտնուած ժողովուրդը մի րոպէ լռեց. դատարկ մնացած տեղումն երեւում էր մատաղահաս օրիորդը, ընկած ծնկների վրայ եւ ձեռքերը մեկնած դէպի երկինք. կոպիտ բանտորը բռնեց նրա մազերից հէնց այն ժամանակ, երբ միւսը կամենում էր բարձրացնել նրան գետնից:

—Ի՞նչպէս գեղեցիկ է այդ օրիորդը, իր մտքում քաբելացին ժպտալով,—որի հանդերձից երեւում էր նրա թագաւորի մերձաւորը լինելը,—ես հաւատացած եմ, որ եթէ այս մարգարիտը նաբուզոդոնոսորին հասցնեմ, նա արքայաբար կըվարձատրէ ինձ:

Հէնց այդ րոպէին մի երիտասարդ դուրս պըրծնելով ամբոխի միջից՝ շտապով մօտեցաւ աղջկան, յետ մղեց նրան հարձարողներին եւ ասպա համարձակ գոռաց ամբոխին.

—Ամօթ չէ՞ ձեզ համար յարձակուել այս անպաշտպան աղջկայ վրայ, որ մեր ցեղիցը չէ:

—Ո՞վ է այս երիտասարդը, եղաւ առաջին հարցը, երբ զարմանքը մի քիչ մեղմացաւ. ի՞նչ իրաւունքով է խառնւում, երեւի՝ հրէաների կողմնակից է, կամ շատ կարելի է ինքն էլ նրանց ցեղից է: Ժողովուրդն ընդունեց սպառնական ձիրք. իսկ հարամիտ մարդիկ հաւաքուեցան նրա շուրջը:

—Ցե՛տ, գոռաց երիտասարդը, ցոյց տալով այն ոսկեայ տախտակը, որի վրայ դրոշմած էր նաբուզոդոնոսորի անունը եւ կախած ունէր կրծքից. թագաւորի մերձաւորին ձանձրալարհ տուէք, շարունակեց երիտասարդը:

Այս խօսքերը ազդեց զարմանալի կերպով: Ժողովուրդը վախենալով յետ կանգնեց:

—Ընդունիր շնորհակալութիւնս, քարի երիտասարդ, ասաց մատաղահաս օրիորդն իր պաշտպանին... Ստուած քեզ ուղարկել է ինձ մեծ վտանգից ազատելու համար:

—Օրիորդ, ես կատարեցի միայն իմ պարտականութիւնը, իսկ այժմ, թոյլ տուր, ճանապարհ ձգել քեզ մինչեւ ձեր տունն:

Քաղաքի հրէից թաղի ճանապարհի վրայ՝ աղջիկը պատմեց թէ ինչպէս ինքն ընկաւ որոգայթի մէջ. իր հայր՝ ռաբբի Մենախազին իրան ուղարկեց հասարակութեան մեծի մօտ, ճանապարհին փակուեցաւ ժողովրդի մէջ եւ տարուեցաւ Իսմարիի հրապարակը:

—Ինչպէ՞ս է ձեր անունը, հարցրեց ուղեկիցը:

—Միրիամ, պատասխանեց օրիորդը, կանգնելով մի տան մօտ եւ աւելացնելով. հայրս այստեղ է կենում, արդեօք չէ՞ մոռնի ինձ հետ, որպէսզի հայրս եւս շնորհակալութիւն յայտնի ձեզ՝ ինձ փրկելու համար:

—Ես կը մոռնեմ, բայց ոչ դրա համար, այլ անձամբ ծանօթանալու ձեր հօր հետ, որի գիտնականութեան համար ես շատ բան եմ լսել: Աղջիկը բաղխումից յետոյ, դուռը բացեց մի պատուական տարեկին. սրանք մուտք գործելով՝ ընկատեցին, որ իրանց հետեւում են:

* * *



ըէից ռաքըի Մելեխագի եւ թագաւորի զրագրի մէջ, հընայած նրանց զանազան դաւանութիւնը, շուտով հաստատուեցան սերտ բարեկամական յարաբերութիւններ. երկուսն էլ գիտնական մարդիկ լինելով, սկսեցին համակրել միմեանց, բայց աւելի ուժեղ պատճառ կար, որ քաշում էր երիտասարդին դէպի Մելեխագը: Նա ի սրտէ սիրեց հընատագեղ Միրիամին. նրա կողմից եւս փոխադարձ սէր ենթադրելով, ուստի եւ շատ շուտ գնում էր նրանց տուն, որին եւ սիրով ընդունում էին:

Թագաւորի զրագրի անունն էր Նաքօ: Սա քաղդէական ծագումից էր եւ կրթուել էր Էրէխ քաղաքի յայտնի քուրմերի դպրոցում: Ակկադիական լեզուներ գիտենալու պատճառով, կանչուեց Բաբելոն Նաբուզոդոնոսորի մօտ, որպէս զի այդ լեզուով գրուած ճեռագիրները, որը պահպանւում էր թանգարանում՝ թարգմանէ քաղդէական լեզուով: Նաքօն պարապում էր թանգարանում, եւ իրաւունք էր տրուած ընտրել իրան օգնականներ: Մելեխագը Նաքօի նման մեծ եռանդով պարապում էր հնութիւններով. թէեւ գիտէր ակկադիական քնագիրների զոյութեան մասին, բայց յայտնի չէր նրան նրանց բովանդակութիւնը: Այդ ճեռագիրները խօսում էին Աստուծոյ արարչագործութեան եւ Յիշեղէի մասին: Երբ Նաքօն պատմեց Մելեխագին այդ ճեռագիրների մասին, վերջինս յայտնեց ցանկութիւն ծանօթանալու այդ քնագիրների հետ: Նաքօն պատրաստ էր կատարելու նրա ցանկութիւնը, ե-

թէ միայն Մելեխազը դառնար օգնական, որպէսզի այդպիսով հաշտուի այն կանոնից, որը թոյլ չի տալիս կողմնակի անձանց մտնել թանգարան: Ռաքելին համաձայնեց: Մի անգամ Նաբօն տարաւ Միրիամի հօրը թագաւորի պալատները ցոյց տալու: Մելեխազին երբ մնաւ, տեսնելով իրան շրջապատող շքեղութիւնը՝ զարմացաւ, վերջը մնաւ պալատի այն մասը, որտեղ գտնւում էր ձեռագիրների թանգարանը: Նա բաղկացած էր մի քանի մեծ եւ փոքր դահլիճներից, որտեղ կարգով դասաւած էին հազար տեսակ թիթեղէններ, այրւած կաւից, որոնց վրայ կային փորագրութիւններ. իւրաքանչիւր թիթեղ ունէր համար եւ կազմում էր մի որ եւ է հեղինակութեան մասը. կաւէ գլանակների վրայ էլ, որ պահւած էր պահարաններում՝ կային ուրիշ հեղինակութիւններ: Մելեխազին հէնց այդտեղ տեսաւ, թէ ինչպէս են գրում կաւէ թիթեղների վրայ, որովհետեւ մի քանի մարդիկ պարապում էին արտագրութեամբ: Նրանց առաջ դրւած էր իսկականը եւ փափուկ տախտակեայ կտորները, որի վրայ նրանք փորագրում էին սուր գրչով: Փայտերի յայտնի մասը գրելուց յետոյ ուղարկում էին հնոց այրելու համար: Նաբօն եւ Մելեխազին մի առ ժամանակ մանգալուց յետոյ դահլիճներում՝ մնան փոքրիկ դռնով գաղտնի պահեստը, որ մի եւ նոյն ժամանակ Նաբօի պարապելու աւեւտարանն էր: Մելեխազին տեսաւ այստեղ մի մեծ կերտւածք ալիքաստրից շինած. նա ներկայացնում էր ձկների աստուած՝ Յովնանին: Նրա առաջի մասը կրում էր մարդու կերպարանք՝ երկար մօրուքով, իսկ մէջքը նմանում էր ձկան: Այս աստուածութիւնը մի ձեռքում բռնած ունէր մի աման, որից թափւում էին գետնի վրայ առատութեան սերմեր: Նաբօն մօտեցաւ Յովնանի կերտւած-

քին եւ հուպ տուաւ նրա մի ձեռքն, որով ալիքատարի տախտակը լռելեայն ցածրացաւ եւ բացուեց գաղտնի պահարանը: Այստեղ դարսուած էին բազմաթիւ տախտակներ զարմանալի գրութիւններով, որոնք համարեա անուացել էին հնութեան պատճառով: Նաբօն ընտրեց նրանցից երկուսը եւ տալով Մելխիսեդեկին՝ ասաց.

—Այս ամենահին տեղեկութիւնն է Յիսուսի մասին. դրանք կազմում են առանձին պատմութիւն աստուածային հերոս՝ Նեմրուդի կեանքից, եւ ներկայացնում են մեղաւոր մարդոց կործանումն, բարեպաշտ մարդու փրկութիւնն իր մերձաւորների հետ. այն ժամանակից երբ այդ գրուած է, երեւի, անցած կըլինի հարիւր դար: Թանգագին ձեռագիրների տեսքը, որոնց քովանդակութիւնը խոստանում էր լրացնել հրէից ժողովրդի նախկին աւանդութիւնները, ցանկութիւն առաջացրեց Մելխիսեդեկ մէջ իմանալ այդ բաները. նա դժւարութեամբ կարող էր ծածկել իր այլայլութիւնը, ուստի եւ հարցրեց Նաբօին.

—Չեմ թարգմանի արդեօք այդ պատմութիւնը ինձ համար:

—Իրաւունք չունեմ, պատասխանեց նա. դրանք պատկանում են սուրբ ձեռագիրների կարգին, որոնց մեր քուրմերին միմիայն թոյլ է տրուած մերձենալու. ով դրանց մօտ թողնի կողմնակի անձանց, նրան այրում են խարոյկի վրայ. ես էլնց շատ համարձակութիւն արի, որ ցոյց տի ձեզ:

—Բայց ես երդուում եմ լուռ կենալ:

—Կայ միայն մի հնար, ասաց Նաբօն մի փոքր մտածելուց յետոյ:

—Ո՞րն է:

—Եթէ դու կըդառնաս իմ հայր:

—Ի՞նչ ես ուզում ասել, չեմ հասկանում:

—Ուրեմն լսիր ինձ, շարունակեց Նաբօն. ես սիրում եմ քո դստեր. տուր ինձ կնութեան, այն ժամանակ դու իմ հայր կըդառնաս, որի առաջ օրէնքով ես չըպիտի ունենամ ոչ մի գաղտնիք:

Մելեխազին անասելի կերպով զարմացաւ. թէեւ նա սիրում էր երիտասարդ քաղդէացուն, մինչեւ անգամ նկատելի էր նրա սիրային յարաբերութիւնը Միրիամի հետ, բայց երկու սիրահարների մէջ ամուսնութիւնը դաւանութեան պատճառով հակառակ էր անհնարին:

—Ես քեզ հաճարում եմ իմ քարեկամ, պատասխանեց Մելեխազին եւ սիրով կանանէի ձեզ փեսայ, եթէ դու պատկանէիր իմ ժողովրդին. բայց դու ինքդ գիտես, որ ես, ինչպէս Ռաքէլի, կարող եմ միայն դաւանակից տալ իմ դուստրը:

—Ես գիտնական մարդ եմ, պատասխանեց Նաբօն, ուսոի եւ չեմ հաւատում աստուածներին, այլ հաւատում եմ միայն աշխարհի մի Արարչին, ինչպէս եւ դուք, եւ եթէ կամենում ես, ես յետոյ կանանեմ նրան Բահաղի տեղ՝ Եհովա:

Մելեխազին մեկնեց ձեռքը եւ ասաց.

—Եթէ այդպէս է, թող Միրիամը ամուսինդ լինի. բայց մի՛թէ չես վախենում անբաւականութիւն ծագեցնել կրօնափոխութեամբ:

—Թող այդ քոլորը գաղտնիք մնայ, պատասխանեց Նաբօն. իսկ ես կըհեռանամ Բաբելոնից եւ կը բնակուիմ մի այլ տեղ, իսկ այժմ հաւատալով ձեր խօսքին, կըթարգմանեմ ձեզ համար այդ ձեռագիրը: Եւ վերցնելով փայտի կտորներից մինը, կարդաց Ջրհեղեղի մասին, իսկ Մելեխազին գրեց պապիրոսի թերթի վրայ:

* * *

Ինչդեռ երկու գիտնականները պարապում էին թագաւորական ճեռագիրների թանգարանում, նրանց համար պատրաստուում էր զարհուրելի վտանգ: Թագաւորի այն մերձաւորը, որը հետեւում էր Նաբոթին եւ Միրիամին Իստաբի հրապարակից՝ էր մոռացաւ գեղեցիկ հրէուհուն:

Սարդուկաբը՝ այսպէս էր նրա անունը, այն շողոքորթներից էր, որոնք օգտուում են բարձր անձանց թուլութիւնից. նա կարողացաւ փաղաքշանքներով Նաբուզոդոնոսորի սիրելին դառնալ: Մի անգամ՝ նա պատմեց Նաբուզոդոնոսորին Միրիամի մասին եւ գրգռեց նրա մէջ Միրիամին տեսնելու ցանկութիւն. բայց թագաւորը չէր կամենում՝ օգտուել իր իշխանութեամբ եւ խափանել այն խոստումը, որ տուել էր հրէից քուրմերին՝ իր հովանաւորութեան եւ պաշտպանութեան մասին. ուստի յոյս տուաւ Սարդուկաբին, որ կընդունի, եթէ աղջիկն անձամբ կրգայ պալատը:

Այժմ մնում էր, որ խորամանկը հնարներով ստիպէր Միրիամին գալ պալատ:

Նա մի անգամ պատահմամբ տեսաւ, թէ ինչպէս Նաբոթն հրէից Ռաբբիին տարաւ թանգարան եւ ապա մտան գաղտնի պահեստը: Նա ուղղեց իր քայլերը դէպի պալատական պահապանների գլխաւորը եւ պատուիրեց նրան Նաբոթին եւ նրա ուղեկցին բռնել, որոնց պատասխանատուն ինքն է դառնում:

Երբ գիտնականները դուրս եկան թանգարանից, նրանց շրջապատեցին զինուած պահապանները եւ հետախուզելով նրանց՝ Մելեխազի մօտ գտան թարգ-

մանած պապիրոսը: Այս բանը պահապանների գլխաւորին այնպիսի ծանր յանցանք թւաց, որ հրամայեց իսկոյն կապել եւ նետեցնել յանցաւորին բանտ. ապա իսկոյն գնաց եւ ամենը պատմեց Թագաւորին:

* * *

Ելևիազիի քանտարկութեան լուրը կայծակի արագութեամբ տարածւեց հրէից հասարակութեան մէջ. ամբողջ հասարակութիւնը սաստիկ վախեցաւ: Միրիամը գտնւում էր յուսահատութեան մէջ. նա երկիւղ էր կրում թէ իր հօր եւ թէ իր ազատարարի մասին, միայն իրան թոյլ էր զգում փրկելու նրանց եւ չերմեռանդաբար աղօթում էր՝ նրանց թշւառութիւնից ազատելու համար:

Հասարակութեան ծերերը հաւաքւեցին խորհրդի եւ վճռեցին դիմել Թագաւորին խնդիրքով, որի համար իբրեւ միջնորդ ընտրեցին Դանիէլին, որը Բաղդասար անունով մեծ պաշտօն ունէր Թագաւորի մօտ. բայց սա եւս ոչ մի կերպով չը կարողացաւ օգնել բանտարկեալներին: Թագաւորը հաւատացնում էր որ այդպիսի ծանր յանցանք պիտի պատժւի, բայց ի պատիւ Դանիէլի, նա ոչինչ չի պահանջի հրէից հասարակութիւնից: Միրիամը ախ ու վախով էր անցկացնում իր օրերը. մի գիշեր երբ նա հանգստացել էր լալուց՝ լսեց թխկթխկոցի ձայն. աղախինը բացեց դուռը եւ մտաւ Սարդուկարը, որը մօտենալով Միրիամին կեղծ յարգանքով ողջունեց:

—Ես լսեցի քո թշւառութիւնը եւ եկայ քեզ փրկութեան ճանապարհ ցոյց տալ, եթէ կամենում ես իմ խորհրդին հետեւել, ուրեմն վաղը գնա անձամբ

պալատը, ես այնտեղ կը լինեմ եւ կը տանեմ քեզ Նաբուգոդոնոսորի մօտ. շատ կարելի է որ խնդիրը փափկացնէ նրան:

—Ո՞վ ես դու, հարցրեց Միրիամը աւելի հանգիստ շունչ քաշելով:

—Թագաւորի հաւատարիմ ծառան եմ:

—Ո՛հ, շատ չնորհակալ եմ որ քարոզեցան հոգին, ասաց օրիորդը ուրախութեան ժպիտը երեսին, այո՛, ես կը հետեւեմ քո խորհրդին եւ կը փորձեմ փրկելու հօրս: Սարդուկարը յայտնեց Նաբուգոդոնոսորի ընդունելութեան ժամը եւ գնաց:

* * *

Նաբուգոդոնոսորը (որը նշանակում է Թող պահպանէ Թագդ Նեբօ Ասուածը) վերջացնելով իր գործերը, հանգստանում էր իր շքեղ պալատում:

Վարազոյրը կամաց յետ քաշուեց եւ մոտաւ Սարդուկարը, որը ընկնելով յատակի վրայ ասաց.

—կամենում է արդիօք Բաբելօնի Թագաւորն ընդունել հրէուհուն. նա եկաւ եւ սպասում է:

—Թո՛ղ մտնի:

Մի րոպէից յետոյ երեւաց Միրիամը ծածկուած քօղով եւ ընկաւ Թագաւորի ոտները եւ իր հայցող ձեռքերը բարձրացնելով, լալով աղաչանքեց.

—Ամենազօր Թագաւոր եւ հրամանատար, զթա իմ հօրս:

—Դու ես Միրիամը, ասաց թագաւորը. ինչ գործում էին քո գեղեցկութիւնը, երեսդ արդեօք չես քանալ:

Միրիամը քաղցրացրեց ձայնը եւ պատասխանեց.

—Ես վախենում էի քո թագաւորական փայլից. բայց երբ հրամայում ես, ես կը հնազանդւեմ:

—Իրօք, որ դու շատ չքնաղազեղ ես, բացագանչեց Նարուզոդոնոսորը զմայլած նրա գեղեցկութիւնից. ոչ մի կին իմ թագաւորութեան մէջ չի կարող քեզ հետ համեմատւել:

Աղջիկը կարմրեց եւ զգաց աննկատելի սառուցը:

—Քո հայրը քոնած է ծանր յանցանքի համար. ասաց թագաւորը քիչ լռելուց յետոյ, դիտելով անակընթարթի աղջկայ հնաշխարհիկ երեսը. նա եւ իմ զրագիր Նաբոն մահու արժանի են:

—Ողորմիր, աղերսում էր օրիորդը:

—Ես քեզ հաւանում եմ. ուստի եւ խիստ չեմ լինի:

—Ո՛հ, ամենազօր տէր, օգուիր քո թագաւորական իրաւունքով եւ եղիր ողորմած, ներիր նրանց: Եւ այսպիսի խօսքերով նա խնդրում էր թագաւորին գթալ թէ հօրը եւ թէ Նաբոյին:

—Ամբողջ կեանքումն քեզ համար կաղօթեմ եւ կը յարգեմ քեզ ինչպէս մեծ եւ առաքինի օրիորդներից:

Նարուզոդոնոսորը Միրիամին բարգրացնելով ոտքի վրայ՝ ասաց.

—Լաւ, ես կը մտածեմ եւ Սարդուկարի քերանով կը յայտնեմ:

Միրիամը շնորհակալութիւն յայտնելով, դուրս գնաց սենեակից:

Թագաւորը նրա յետեւից նայելով ասաց. նա կը լինի իմն, այդպէս է իմ ցանկութիւնը:

* * *

Ենդային ալևկոծութեամբ սպասում էր Միրիամն Թագաւորից լուրի. արդէն սկսեցին խօսել մօտակայ պատուհասի մասին: Միրիամն համառում էր ժամերը Թէ երբ կը գայ Սարդուկարը: Ահա վերջապէս դուռը բացւեց, մուտ Սարդուկարը, յարգանքով մօտեցաւ եւ ողջունեց ու ասաց.

—Իմ հրամայողը ուղարկում է քեզ սիրալիր ողջոյն: Նա կատարում է քո խնդիրքը, եթէ դու կը համաձայնւես լինել նրա կանանցից մինը:

Միրիամն յուսահատ վեր ընկաւ աթոռի վրայ եւ միայն լսեց այս խօսքերը՝ „վաղը կըգամ պատասխանի համար“: Հաւատարիմ աղախինը ուշքի բերեց Միրիամին. նա շատ վատ անցկացրեց ամբողջ գիշերը եւ աւելի լաւ էր համարում մնռնել. լուսանալուն պէս վճռեցայտպէս.

—Հայրս տուաւ ինձ կեանք եւ նրա համար էլ կը զոհեմ այդ կեանքը. կեանքը կեանքի փոխարէն:

Շատ սպասել չը տուաւ Սարտուկարը.

—Կամենում ես փրկել հօրդ:

—Այո՛, կամենում եմ, ասաց Միրիամն:

—Շատ լաւ, այժմ յանուն Թագաւորի ես յայտնում եմ, որ քո հայրը պիտի գնայ Երուսաղէմ եւ այնտեղ մնայ. իսկ Նաբօն արտաքսւում է Էրէխ, ուր կապրէ քրմերի հսկողութեան ներքոյ. իսկ դու այսօր պիտի տեղափոխւես պալատ եւ այլ եւս չես դուրս գալ այնտեղից, համաձայն ե՞ս:

—Այո՛, համաձայն եմ, պատասխանեց Միրիամը վճռողապէս. բայց ես մի քան եմ ցանկանում եւ հաւատացած եմ, որ թագաւորը համաձայն կըլինի կատարելու. ես խնդրում եմ, որ ինձ համար են գերի, միայն թէ ազատ թողնեն մինչեւ մի լուր կը ստանամ հօրս եւ նաթօի ապահովութեան համար:

—Շատ լաւ, ես առաջուց խոստանում եմ, որ կը կատարուի քո ցանկութիւնը, պատասխանեց Սարդուկարը:

Այդ օրը Միրիամին փակած պատգարակով տարան պալատը:

* * *

Այս անցքի վերջը կայ բաբելական պատմութիւններից մէկում: Սարդուկարը յայտնեց երկու շաբաթից յետոյ Միրիամին, որ աքսորականներն արդէն ապահով են եւ ազատուած եւ ասաց, այժմ պատրաստուիր, թագաւորը քեզ սպասում է: Միրիամն ասաց, որ իրան սպասի մինչեւ կըգարդարուի. երբ Սարդուկարը դուրս գնաց սպասելու, Միրիամը սկսեց աղօթել եւ ապա հանեց թագցրած սուրը եւ աղօթեց ասելով.

«Տէր, օգնիր ինձ փրկելու Հոգիս և մարմինս ամօթից. որովհետև ես օգնեցի իմ թանգագին մերձաւորներին.» ապա խրեց սուրը իր կուրծքը եւ տեղափոխուեց այն երկիրը, որտեղից վերադարձ չըկայ այլ եւս:

Թարգ. Մ Ի Ր

Ս եղ ր բ ֆ ու կ ա ն ի ա ղ ե ր



ՄԱՆԿԱՆ ՑԱՊԱՆԱԳԻՐ

Ե՛ր մեղքիդ համար, մանուկ նոր ծըլած,
Փայլուն աստղիկդ երկնից հանգըրին.
Ո՛ր մեղքիդ համար չուզեցաւ Աստուած,
Որ դու վայելես կեանք սիրագին:

*

Ա՛ձրագործ էիր.—մարդասպան յեղուզակ,
Կամ պղծել էիր տաճար սրբութեան,
Թէ՞ օրինազանց որդի անառակ,
Թէ՞ ընկած էիր տղմում՝ հարութեան:

*

Ա՛խ... քայց այդպիսիք ահա քաղցրալից
Դատ վայելում՝ են աշխարհի քարիք.
Իսկ դու հողի տակ զրկուած ամենից,
Դու թշուառ, անբիծ սիրասուն մանկիկ:

ար. ցար.

ՄԱՐՏ

Իսուն օր պաս, մեծ պաս, այսուհետեւ հեռո՛ւ գիւղացու տանից ուտել-խմելու, սէր ու սոխրաթի 1), պարապ ու սարսապ քաշ գալու մտքերը:

«Մարտի իննը՝ մատը 2) կըտրի քցի ծիլնը» 3), ասում՝ են յիզատէրներն 4)՝ ու քունջ ու պուճախից՝ կարասների տակերից դուրս քերում՝ ժանգոտած էտոցն 5) ու դահրէն 6), թոզոտած քանն ու թաւիշակը 7), խարտն 8) ու կացինը:

Մեծ պասի օրերն են, մարտ ամիսն է, տէրտէրը, ժամերդ երկարացրու, ժամասւր, աղօթքին ու զանճանակին զօր տուր, գիւղի իշխանն, տանուտէրի հետ գարունքուայ խարջերի ու թաւջու 9) վրայ գլուխ ճաքացրո՛ւ, չանումը չան ունեցող չահէլ տղամարդի սառած արիւնը ծիւնից ազատուած գետնի հետ ևո է ընկել, ռանչպարի 10) օրը դուրս է եկել, գիւղերի օդէքն ու կալերը լուերին ու մժեղներին են մնացել: Մարտ ամիսն է. յիզատիրոջ կռնատակը կոծոծ 11)

---

1) Չուարճախօսութիւն. 2) Խաղողի որթի մատը. 3) Ձիւն. 4) Այգեպուծ. 5) Հօտոց, այգեգործական կորակատուց դանակ. 6) Ցաքատ, ծառերի ճղքները կտրատելու կոր գործիք. 7) Բահակոթին անցկացրած փայտեայ մի գործիք, որին սեղմելով ոտքը՝ ոյժ են տալիս բահին. 8) Ցեսան, սրոց. 9) Հարկաժողովի նախահաշիւ. 10) Երկրագործ. 11) Մի տեսակ փուչ է, որ անցնողի չորերին է փակչում.

է մոռել, Ջանը ցից է ընկել, խթխթացնում՝ խթխթացնում՝ է նրան ու առաջ անում՝ քշում՝ տանում՝ յիգումը 1) կանգնացնում: Գիւղացին էս ծառի կճեպին է հուպ տալիս, էն ծառի քարն 2) է քաղում՝ խաղողի մատն է հողի տակից հանում՝ կտրում՝ կտրուածքը մանդրում՝ ժպտում՝ ու մորումն ասում՝ թէ Աստուած էս տարի ցաւումից, կարկտից, թրթռից, ժանգից փրկեց, ծառապատուղը ու խաղողը վերեքուիլ 3) չի:

Դէ հա ղէ՛ն, հը՛ հա հը՛, մի էսօր, մի էգո՛ւց անցկենայ, էլ օր մնպատճառ:

Էլօրն եկաւ, գիւղացու սրտի թրպրտոցը կտրուեց. ծէգէլահան նա քահակոթը վերցրեց, գնաց ժամի դուռը պաչեց, իր քանին գործին յաջողութիւն, իր հանդ ու հանդաստանին լիութիւն, առատութիւն խնդրեց ու շտապեց յիգին:

Ո՛ւր է շտապում՝ գիւղացին, դեռ հօ օրերը ցուրտ են, էս ժամանակ այգումը նա ինչ գործ ունի:

—Ունի, ունի, սիրելի Ղազար, ունի, գիւղացին մի սիրեկան մեռել ունի, ուզում՝ է նրան յարութիւն տալ, ոնց որ Տէրը Ղազարոսին տուեց:

Գիւղացու մեռելն իր սիրած խաղողի կուղրակն (որթ) է, աշունքուանից դէսը խաղողի վազը հողի տակին պառկած է, հողը գլխին տուած է: Ուրիշ շատ աշխարհներըի համար ասածս անհաւատալի կըթուի, բայց խօսքումս սուտ չըկայ, մեր նոյ պապը տապանիցը որ ցած եկաւ, Ակոռումն, առաջին յիգին տընկեց, երեան աչ ու ձախ դարձրեց, մի աչքով հակայ Մասիսին մտիկ տուեց, միւսով վիթխարի Արագածին, ցուցամատն երկու վայրկեան ճակատին դրեց, ուշն ու միտքն իրան հաւաքեց ու էս վճիռը դրեց, էս

1) Այգի. 2) Պատուկ, կոկոն. 3) Տեղ չի լինելու

կտակը մեզ աւանդեց.—իմ յաջորդ սերունդներ, իմ թոռներ ու ծոռներ, իմ հարազատ զաւակներ, իմ լեզուն մինչեւ աշխարհքի վերջը հասցնող Արարատցի Հայեր, ինձանից ձեզ ամանակ 1), ինձանից ձեզ հայրական խրատ, թէ որ ուզում էք Արարատեան աշխարհի անուշ խաղողն ուտել, կծպճան քաղցր գինին միշտ խմել, ձմեռը ձեր խաղողի կուղրակը թաղած պահեցէք, թէ չէ Մասիսը հարաւը կը փչի, Արագածը հիւսիսը, դալար որթի արմատը հիւսիսի ցրտից ցրտատար կը լինի, նրա բարուրակներն ու մատները հարաւի շախտից 2) կը խաշուին:

Էն օրից էս օր՝ Հայն իր պապի հրամանը սուրբ է պահում, ձմեռուան ըերնին իր խաղողի թուփը հողի տակն է անում, թաղում է:

Սխալ խօսք է, մեռածին կը թաղեն, մեռածի զըլխին Հանգստեան շարական կերգեն, լաց կը լինին, արտասուք կը թափեն, քայց մեր գիւղացին իր որթը հողի տակն անելիս՝ ոչ տէրտէր է կանչել, ոչ տիրացու, ոչ ժամ է անել տուել, ոչ պատարագ, ոչ խունկ, ոչ զանճանակ. նա չղլրը պինդ, կոնները հաստ, աշխատասէր երիտասարդներ է ժողովել, էշի ըերող 3) մուխամբազներ 4) է երգել տուել, իր սրտի սիրեկան զաւակին չահել տղէքանց երգերովն է օրօր ասել, նանիկ կանչել, խոր քուն դրել, հողի լէրքը 5) վրէն պինդ ծածկել, որ ձմեռը չը մրսի, չը հիւանդանայ ու հանաքը չանաքի փոխուի, հոգին փչի ու մեռնի: Չէ՞ որ ձմեռուայ շունչը մահ մանուածողի շունչ է, ում՝ հանդիպեց՝ նրանից ձեռներդ լուա:

Ստեղծողին փառք, ձմեռն էսօր ինքը շունչը փչեց,

---

1) Աւանդ: 2) Խորչակ: 3) Ոգեւորիչ: 4) Սիրերգ: 5) Վերմակ:

կամ փչելու վրայ է, մարտ ամիսն է, հայ-հայը գնացել է, վայ-վայը մնացել:

Գիւղացին գիտի, որ մարտի թունդ քամիները հոգևարքը մեղաւոր հիւանդի մահուան հրեշտակի հետ տուած կռիւներն են, ինչքան զօռումը զօր կայ՝ թող փչի, թող վզվզայ, թող ալալայ. սանդը ջուր ցրում՝ ծնծղի, ի՞նչ դուրս կը գայ, մի սհաթ, երկու սհաթ էլ կռիւ տուր, Գաբրէլ Մուքէլի ձեռիցը կեանքդ կարող ես փրկել. հրեղէն սուրը ցոյց տուին՝ լեղիդ պատռնց, չանդ սառեց, ոտներդ ծգուեց:

Գարունքն էլ որ կայ՝ ձմեռուան հոգեւար հրեշտակն է, կարմրակուլոլ արեւի ոսկեշողշող երեսը ցոյց տուեց, ձմեռուան սառած ապիտակ արիւնը—ձիւնը ջուր կտրուեց, երկիրը շունչ առաւ, աշխարհը կեանք ու կենդանութիւն ստացաւ:

Դէհ, քան ընկէք, կռներդ դալար, կռներիդ մատաղ, կտրիճ երիտասարդնե՛ր, խաղողի տաշտակը 1) ժաժ ու մաժ է գալիս, քունը թափել է, զարթնել է ուզում, շուտ արէք, կռներդ շուտ շուտ շարժեցէք, հողը յետ տուէք:

Երկու երեք օր՝ եւ ոչ մի խաղողի որթ չես գտնում՝ հողի տակին, բոլոր այգիքանց թաղը յետ է տուած:

Կը շինուի գիւղացու տունը, եթէ իւր սիրելի խաղողի կուդրակը հողի տակին շատ մնայ, թաղը յետ տալն ուշանայ, էսօր մոխիկ ես տալիս մատին, հէնց իմանաս՝ կպչանի համար ալէտ գալու չորացած արքատ 2) է, վրայովը գիշեր անցկացաւ՝ կը տեսնես, որ մատների աչքերը 3) ճկլթնես եղնգի չափ է դառել,

1) Բարուենակ, որի վերայ մի քանի մատներ կան: 2) Խաղողի կտրած և չորացած մասը: 3) Բողբոջ, պտուկ:

հաստացել, լցուել է, երեք զիշերը էլ որ մնայ՝ կը քացուի, տերեւը կերեւայ, էտելուս 1) աչքերը կը թափուին, զիւղացուն ոզուից 2) կը կտրեն. էդ աչքերի մէջն է նրա տարեկան ապրուստը. վազան աչքերն են մեզ հարկաւոր, տերեւ պիտի տան՝ տօլմա 3) փաթաթելու, խաղող պէտք է տան՝ քաժակացու զինի պատրաստելու:

—Քո ողորմութիւնին մեռնեմ՝ երկնային թագաւոր, քո արածներն անքննելի, քո գործերդ անիմանալի են, ուսերը վեր է քաշում՝ զոհ սրտով աչքն երկինքը ձգում՝ զարմացք արտայայտում զիւղացին. երբեմ՝ խաղողի աչքը մի չոր աւազի հատիկի պէս մատիցն էր կպել՝ չէր երեւում՝ էս օր խաղողի պտղի չափ է դառել, հաստացել, տոզել, ապրշումի պէս փափկացել:

Գիւղացին կեռակտուց էտողը տանից՝ մի հատ խաղողի մատը կտրեց:

Անմեղ մանուկի արտասուների կաթիլների պէս՝ կաթ կաթ կաթում՝ են կտրած մատի միջից պարզ, ամենապարզ ջրի կաթիլները:

—Ընչի՞ չը պէտք է խաղողի աչքերը լցուին ու հաստանան, կանանչեն, նոր մանուկներ դուրս քցեն ու խաղողի ճիթերը վրայիցը կախուեն, վճռում՝ է զիւղացին. փոս ընկած լեռ քարափի մէջ երբ անծրեւաջուրը լիճ է կազմում՝ մի քանի օրից տեսնում՝ ես, որ ջուրը ցամաքեց, տղոը խոտ ծլեց: Խաղողի մատի մէջ ջուրը հո իրանից է:

Ուշացնելը տնքանողութիւն է, էտելը վերջացնելուց յետոյ՝ վճռում՝ է զիւղացին, քանի խաղողի աչ-

1) Հօտել, վազը կտրել: 2) Ապրուստ: 3) Ամենքիս յայտնի կերակուրը:

քերը չեն քացուել, փորենք վերջացնենք, որ երեխէ-քանց պոշներն աշունքը խաղալ ուտելուց շիրտուին 1), հարսանիքները շատանան, ազափները մուրազներին հասնեն, անցած գնացած մեռելներն յիշուին, յիշատակուին, թէ չէ գնի չեղած տարին, յոյսներն այգու վրայ դրած՝ գիւղացու տանից կորում է ամէն բարին:

Հէնց էդպէս է, մարտի ինն ևկաւ, գարնանամուտը կալանք՝ այգետիրոջ սիրտը տեղն ընկաւ, նրա այգին ժիր ժիր բանուորներով լցուեցաւ, էսօր սուր սուր էտոցները ձեռքներին էտում են, կտրատում են խաղողի մատները, մի քանի օրից՝ սրածայր քահերին քացի տալով փորում են թումբը—վազան տակի հողը, փափկացնում կուղրակների տակերը, մաքրում, քոլ ու քօսից 2) աւելորդ խոտերից ազատում, եւ երբ պրծան՝ ծիծաղում են ու քեֆը վեր քաշում պինչը քամի մնած հողմի խելքի տէր գիժ մարտի գիժ քամիների վերայ:

Հիմի աչքդ յիքանիքանցից շուռ տուր, հանդերին մտիկ տուր:

Մարտ ամիսն է, ծիլը վեր է կացել, աշնանացան ցորենները չորս մատը ծիլ են քշել, քարծրացել, ծնծաղիկի հոտն աշխարհքն է բռնել, ջահել հարսները, սիրուն աղջիկները դաշտերը, արտերն ու հանդերն են լցուել, սրած քանջարքաղիքը 3) ձեռքներն են առել, նոր ծլած աղցանի ջանին են ընկել:

Քաղում են **գառնանկոչ, սիբեղ, աւելուկ, աղինջ, ղնջլոզ, խննուկ, ծնեբակ, զողլապատ:**

Աստուած օրհնել է մեր հողը, էսքան հոգևհամ հա-

---

1) Ֆաղցուռտել: 2) Աւելորդ խոտեր: 3) Սրկաթեայ երկայնածայր դորմիք է բանջար քաղելու համար:

մեղ քանչարելէն գտնուած տեղը պատ էլ որ չը լինի, ուտիատց կերակրի երեսին ոմվ մոխիկ կը տայ:

Դէ հիմի ականջդ սրի. էն ինչ քաղցը ձէն է հետուից լսւում՝. ա՛յ, էն արեգունի 1) ընկած սեւ ցելի մէջ՝ շատ հետուումն՝ պատիկ պատիկ ղարալթուներ 2) են սեւին տալիս, շարժուում՝ են. էդ ձէնն էն տեղից է գալիս:

Յատաջ գնա, մօտացի՛ր՝ կը որոշես:

—Չա՛... ա՛ ... ա՛... խմացանը, էն ուանչպարի ինինը լուծ լծած գութանն է, խամը 3) ցել 4) է անում՝. ուանչպարն ինքն է մտաճկալը, նա ինքն է հօտաղին էշիկի ըցում՝, էն հօտաղներն են Հոռոլոյ երգում՝:

Յետ մոխիկ տո՛ւր, էն ոմվ են կարմիր ու կանանչների մէջ կոլոլուած, գլխներին մի մին կապոց ղրած գութանաւորին մօտեցողները:

—Էն գութանաւորող պատի հարսն ու տանու ագաալ աղջիկն են, նրանց գլխինը գութանաւորի ճաշուայ հացի կապոցներն են:

Հարսի գլխինը մի տեփուր 5) լիքը, գլխուն ձիթով փլաւ է՝ երեք լաւաշ վրէն փռած, տուիրի միջին կապած, աղջկայ գլխինը գազ ու կիսանոց սպիտակ լաւաշ հացեր են՝ հետը պատուց տօլմէն, քոխն ու թազայ խաշած աղցանը:

Հարսի ձեռքին, կոնակախ քունած՝ քողուղը լիքը ոսպէ խաշուն է. աղջկայ ձեռքին՝ գինու մեծ կանաչ գաւն է:

Յարգեւոր 6) ջահէլներն իրանց ծանրութիւններն անխօս ցած ղրին, քանչարքաղիքը վերցրին, գնացին հարեւանի արտն իրիկնութիւն աղցան քաղելու:

---

1) Աբևկող տեղ. 2) Սառեր. 3) Երկարամեայ չը վարած հող. 4) Վարած և դեռ չը ցանած դաշտ. 5) Փայտեայ բոլորակ մատուցարան. 6) Ամօթխած:

—Սուփրէն քցած՝ քանն անիծած, տղէք Ջան, քանդող էլէք:

Մաճկալի խօսքը հրաման է, հօտաղներն եզներին արձակեցին, դաշտն արին ու բոլորը միասին քացուած սուփրի չորս բոլորքը՝ բոլորուանքի բոլորուեցին. դեռ յառաջ լաւաշը մեծ մաթրաթի 1) մէջ գրկեցին, խոթեցին 2) ու յետոյ փլաւը հինգ մատով լաւաշի մէջ կոլոլեցին ու կօրնեցին 3):

—Սուփրէն թափ տուէք, հետու շպրտեցէք, տղէք Ջան, մեր թողած փշրանքի համար աչքը տնկած ապաստաղներ կան, չէ՞ք տեսնում՝ ցեղի միջի թեւաւորները: Ազատ, տուպաշ 4), տաք երկրներից նոր դարձած սարեկ՝ առաւօտենց մինչեւ երեկոյ վար անողների կողքից անբաժան են Ասոծու էս թեւաւորները: Խոփի շուռ տուած հողի տակից դուրս եկող որդները նրանք են ժողովում, գութանաւորի թափած փշրունքները նրանց փորն է մնում:

Երանի՜ մարդ թեւաւորի լեզուն գիտենայ, իրար հետ խօսում են երկու հարեւան հօտաղներ՝ լծան վրայ նստած, տեսնես՝ երկնքումը թռչող կռունկների շարքերը տեսնո՞ւմ են էս ցեղի միջի հաւքերին, կամ՝ իրար ասո՞ւմ են՝ թէ երնէ՜կ՝ մենք էլ մարդից չը քաշուէինք, մեր զուրզովը 5) գայինք, ճիճուներ ու հացի փշրանք ժողովէինք:

—Ճշմարի՛տ, ի՜նչ կարգով ու շարքով են թեւերը թափահարում՝ կռունկներն երկնքի երեսին, ի՜նչքան անուշ է գալիս հետուից ամպերի միջից նրանց ձէնը, հէնց իմանաս՝ քարձր սարից՝ մանր քարերի միջով ներքեւ վազող քարակ աղբրի ջրի կկկոցի ձէնն է. սկի ասես՝ մինն իր կարգը կորցնո՞ւմ է, հարիւրից ա-

---

1) Մեծ կաւեայ պնակ. 2) Ուտել. 3) Փաթաթել ու կուլ տալ. 4) Սև ապուռալի փոքրիկ տեսակը. 5) Երամ.

ւելի կոռնկներն առաջի գնացող հերթի տէր ղաւուզին աչք տնկած, նրա քամակիցը գնում՝ ևն:

Կոռնկի ճայնը հանդուման ուրիշ լսող էլ կայ. ահա, հեռուումն՝ մի ուրիշ գիւղացին վարից պրծել է ու ցելը ցանում: Նա բուռը բուռը ցորենը գոգի կապոցից հանում է ու շաղ տալիս: Նա մի բուռն էլ կռոռնկների համար ցանեց:

—Բարո՛վ անփորձանք պրծնի իմ արտս, ուխտում՝ է ցանքանողը, թող էս մի բուռը ցորենն էլ կռնկներին լինի, որ աշունքը քաղցած փորով չի յետ դառնան:

Կերեւի ուզում՝ ես իմանալ, սիրելի Ղազար, թէ էն ով է, որ մեծ առուի մօտ, քարը ձեռքին, փոքած գետնի վրայ թմբեր է կապում:

—Նա քոստանչին է, քոստան է կապում: Աշունքը, երբ ես ու դու նրա քոստանի մօտումն անցկենալիս կը լինինք, նա մեղրից համեղ սերիով մեր բիմբը կը քաղցրացնի, սառուցը՝ մէջը քցած շաքարաջրից քաղցրը ձմերուկով մեր ծարաւը կըկոտրի:

Վերջապէս, մարտ ամիսն աշխատասէր գիւղացու ամենասիրելի ամիսներից մէկն է:

ՊԵՐՃ ՊՈՕՇՆԱՆՑ

ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԻՆՁ ՊԱՇՏՊԱՆ

Մինչմանուկ էի ես տհաս փոքրիկ,
Դեռ նոր էր բացւում իմ լեզուն թոթով,
Սովրեցուց փութով իմ քաղցրիկ մայրիկ,
—Կնքել խաչաձև՝ երեսս ձեռքով։

*

Անխարդախ հոգով Քրիստոսի սիրոյն՝
«Ո՛վ, խաչ օգնեա՛ ինձ», ասել և յեռոյ,
Սկսել եմ դաս կամ այլ գործ իսկոյն,
Ինչ որ կըլինի ինձ այնուհետ պիտոյ։

*

Այս նախրական պատգամիս շնորհիւ,
Թէ իմ ուսման մէջ, թէ բոլոր կեանքում,
Զարգացայ, հասայ իմ դիտմանց լըրիւ,
Միշտ ուրախ սրտով մխիթար հոգում։

*

Այս աւանդ պատուէր իմ ընթոյշ ծնողին
Միշտ կատարում եմ անխախտ, շարունակ,
Ամեն մի դէպքում ընդ միշտ եմ կրկնում,
Լինում եմ անդորր, յայտով, շնորհանակ։

*

Նաչն իմ օգնական, իմ յոյս, իմ պաշտպան,
Այն իմ փրկութեան անվերջ յիշատակ,
Ներանով պարծեմ, այն է միշտ իմ բան,
Այն և իմ հոգւոյն զօրաւոր դիտակ։

*

Այն է սկզբից իմ դաս հանգանակ,
Նաչն եմ ես պաշտում արտով լուրթ,
Ինձ անունդ աւաւ իմ մայրս այս գունակ,
Նաչն իմ պահապան, իմ միշտ հովանի։

Հ. Թ.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Հիպոպոտամ՝ յունարէն բառ է. հիպոս կընշանակէ ձի, պոտամոս՝ գետ, ուրեմն հայերէն կարելի է

Հիպոպոտամ

ասել գետաձի: Դրանք ապրում են Ամերիկայում. գետաձի կոչւում են այն պատճառով, որ նրանք Աֆ-

ըիկայի տոմուտ գետնուում՝ խրելով, ջրից դուրս են պահում՝ միայն աչքերը, ականջները, եւ այդ ժամանակ նրանք շատ նմանում են ծիու։ Դրանց կաշին հաստ է, հրացանի գնդակը նրանց չի կարող վնասել։ Եթէ կամենում է որսորդը գնդակահար անել նրան, պէտք է գնդակն ուղղակի արծակի նրա աչքերի վրայ։

Աֆրիկայի խոշոր կենդանիների հաշուումն է եւ Աֆրիկայի փիղը, որոնք ապրում են մի քանի հազարը միասին մեծաքանակ հօտերով։

Նշանաւոր են նմանապէս իրանց մեծամարմին ծաւալով Աֆրիկայի ռնգեղջիւրները, որօմադէր-միաապատ ուղտերը, երկարավիզ ընծուղտերն իրանց երկար ոտներով, եզների նման մի տեսակ գոմէշներ, որոնց նեզրերը կարողացել են ընտելացնել եւ ընտանի կենդանի շինել։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել եւ Աֆրիկայի այծեամներին եւ ուրիշ դրանց նման բազմաթիւ մեր ընտանի այծերին նման կենդանիներին, որ ունին զանազան ձեւի եղջիւրներ։ Դրանք անհամար հօտերով թափառում են մի արօտատեղից դէպի միւսը. այնպէս որ եթէ պատահում է, որ առիւծը մտնէ նրանց մէջ, մի քանի ժամ շարունակ նա ստիպւած է լինում՝ նրանց մէջ ճանապարհորդել։

Ն.

Հարաւային Ամերիկայում այժմ սկսել են դործ ածել դինամիտը դետնքը հերկելու համար։

Դաշտի ամբողջ երեսը ծածկւում է երկու երեք տանտչափ խորութեամբ փոսերով, որոնց մէջ խորտում են դինամիտով դնդակները և որոնք իրար հետ միացած են լինում մետաղական թելերով։ Ելեքտրական հոսանքն արձակելով միաժամանակ, բոլոր դնդակները պայթում են, տակն ու վրայ է անում դետնի վերի չերտը և մանրացնում։ Հերկելու այդ եղանակը նոյնպէս բաւական նպատակայարմար է համարւում, ինչպէս և սովորական հերկելու եղանակը։

Հին ժամանակից ի վեր արդէն յայտնի է թանձրացրած կաթը, որ դործ է ածւում ամբողջ աշխարհում, մանաւանդ դէտաւորապէս ծովային ճանապարհորդութեան ժամանակ։ Մի քանի տարի առաջ դոյն այդ թանձրացնելը կատարւում էր և դարձեալ վրայ։ Այժմ Ս. Պետերբուրդ բացւում է դործարան, որ պիտի թանձրացնէ դարձեալ։ Թանձրացած դարձեալը 12 անդամ աւելի պակաս տեղ պիտի բռնէ, քան խականը։ Նա կարող պիտի լինի երկար ժամանակ պահանջ առանց տեսակ կլիմայի տակ։ Նրան դործածելու համար պէտք է հետը խառնել քիչ ալկոհոլ և ջուր։

Չիկագոյի համալսարանի հոգաբարձութիւնը նախապատրաստութիւններ է տեսել առաջիկայ համաշխարհային ցուցահանդէսի համար. օրինակ, դասախօսութիւնները պիտի ամբողջ տարին անընդհատ չարունակուին. բացի դրանից համալսարանը ձեռք է բերել 350,000 հատոր նոր դրքեր այցկատնելի պարտադմունքների համար։

—

Չիկագոյի համաշխարհային ցուցահանդէսի վատահով հրաշալիքներից մէկն էլ պիտի լինի անչուչտ այն ահռելի աղմուկը, որ մի երաժշտական պիտի նուագէ միանգամից 400 դաշնամուրի վրայ։ Դրա համար չորս հարիւր դաշնամուրներ պիտի պատուիրուին բոլորած և դրանց բոլորի լարերը պիտի իրար հետ միացած լինին էլեքտրական լարերով, այնպէս որ երաժշտականը մի լծակի կը լարեցնի դրնելով բոլոր դաշնամուրների նոյն կլաւիշը պիտի հնչէ։ Կարելի է երևակայել, թէ ինչ տպաւորիչ և ինքնօրինակ կօնցերտներ պիտի ունենդրին աշխարհանդէսի այցկատնելը։

—

Կազմուած է մի նոր բնակութիւն ի յիշատակ մանկավարժութեան նախահայր Սան Ամօս Կոմենսկու, որի ծննդեան երկրհարիւր ամեակը տօնուեց մարտի 16-ին։ Ընկերութեան կըմասնակցին Եւրոպայի և Ամերիկայի ամեն ազգերն անխտիր։

Ընկերութեան նպատակն է ուսումնասիրել և կատարելագործել ընդհանուր Կոմենսկեան սրտից խնամատարութիւն, ուսուցմանի և մանկավարժի։

—

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջարկ. օր. Հ. Մ.-ի

1. *Երկար աղիք, ծայրին ծաղիկ:*

—

2. *Առաջին վանկն ածական անուն է,*
Երկրորդը գոյական անուն.
Իսկ ամբողջը մի բոյս է,
Որ մեծ-պապին շատ սիրելի է մարդկանց:

—

Առաջ. Ա. Ս.

3. *Մի բան գիտեմ՝ ես թղթական*
Ոսոխի ընդդեմ զործածական,
Յատուկ անուն է մի երգչի,
Որին ողջ Թիֆլիսը ճանաչի:

Երբ այդ ազնիւ գլուխը
Սուր դանակով եմ կտրատում,
Սովորաբար առատաբուղխ
կարմիր արնով չէ շաղախւում:

Այլ մնում՝ է դեռ կենդանի,
Դառնում՝ զաւակ օտար ազգի,
Այդ անունով որքան ուզես,
Ամենայն տեղ կըճանդիպես:

Պէտք է ասած, այդ պարոնին,
Անկեղծ սրտով էր սիրեցի,
Բոլոր ոյժով հասցրի ընկնին,
Ինչպէս սոխի գլուխ կտրեցի։

Դարձաւ սրբայ այս անգամին
Թէեւ քաղաք, լիճ կարծեցի,
Եւ խղճալով Չիւան Չանին,
Վերջինին կեանք պարգեւեցի։

—

ԽՆԴԻՐ

Առաջարկ. Զ. Ս.

Այս վանդակի միջի թուանշանները այնպէս տեղափոխել, որ ամեն կողմից,	1	2	3	4	5	ամէն ձախ, ձախից ամէն խաչաձեւ,— դուրս գայ 65։
	6	7	8	9	10	
	11	12	13	14	15	
	16	17	18	19	20	
	21	22	23	24	25	

Նախընթաց № 2-ի հանելուկի լուծումը.

Յանթուր. սան, թուր, սա, ուր։

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեանց

Дозв. Ценз. Тифлисъ, 17 марта 1892 года
Тип. Аропъ Т. Я. Назарьянъ, Бар. ул.

Սուրհանդակ

—

Գնտաշէն. Յ. Թ. Դրօտից հարուստակցել թարգմանել եւ փութով ղրկել թարգմանութիւնը:

—

Խմբագրութեան գրասենեակից

—

Սպասւած են ներկայ Թուականի արդէն լոյս տեսած №№ 1 և 2: Երկրորդ №-ը մայիսին կրկին կըտպագրենք և կուղարկենք չըստացող բաժանորդներին, որոնց անունները այստեղ տպագրւած են:

Դօրի՝ Հայոց ուսումնարան, Օլգայ Զազունեան, Դօրիս՝ Բնակութի Հայոց ուսումնարան, Արծանիկի ուսումն. աւագ ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնազարեանց, Գէօհչայ Տարբակ. ուսումն. աւագ ուսուցիչ. Դերձակ՝ Ուսուցիչ Յակոբ Սարիկեան, Գնտաշէնի՝ Միքայէլ Յակոբեան, Դաշլազար՝ Գնտաշէնի Յովհաննէսեան, Գանձակ՝ Աղա Աղայեանց, Սիմէօն Ս. Խաչատրեանց Գնտաշէնի ուսումն. աւագ ուսուցիչ, Եկատերինոզար, ա. Տ. Դուլճանեանց, Զաքարիայա Մատթէոս Մալեանց, Մանուէլեան Աբրահամեանց, Յովհ. Ալեանց, Հայրապետ Իսահակեան. Հոսկ Սերոբեանեան, Դասապետ Յովհաննէսեան, Անդրէաս Գէորգեան, Գօրոս Մելքումեանց Աւետիս Տէր-Գէորգեան. Ղազիի՝ Դաշ-Քոտինի Հայոց Ուսումն., Ղարս՝ Սարգիս Դ. Քիւտահեանց, Ղզըլ-Արւատ՝ Բախշի Շահինեան, Կարիճ՝ Գօրոս Բ. Մելիք-Զարամեան, Ղզլար՝ Կարապետ Դ. Փարսադանեանց, Բրաբիօն Ղօրդանեանց, Նէնաթէք Դ. Աւթանդիլեան, Զաքարէ Ս. Արեշեան, Ղարս՝ Շուշանիկ Իսահակեան, Զարվոնտարայ՝ Մնացական Մինասարեանց, Ղազախ՝ Աղէքսանդր Ն. Զաղաթեանց, Մոսկւայ՝ Մըկըրտիչ Ե. Լազարեանց, Դարեգին Աթաբէկեանց, Մեղրի՝ Վահան ք. Տէր-Գրիգորեանց, Նիւատերինէ Վաչեան, Մանգլիս՝ Արշակ Ս. Թումայեանց, Մեշտոխէր՝ Նոր. Փանեանց, Նոր-Բայազէտ՝ Արշակ Մամիկոնեան, Կարապետ Բուդամեանց, Շուշանիկ Բոտնազեան, Թատէոս Աֆրիկեան, Եզոր Պետրոսեանց, Աղէքսանդր Վիրաբեանց, Նուխի՝ Սարգիս Մ. Դովլաթեան, Հին-Նախիջեւան՝ Նէնաթէք Իսահակեանց, Անանէ Յակաւորեանց, Շուշանիկ Մ. Տէր-Դաւիթեան. Նոր-Նախիջեւան՝ Դպիրանէ Գ. Կիշխիդեանց, Հայոց դպրանոց Ստեփան Դաւթեանց, Մարգարիտ Մ. Եզեկեան, Գոզոլի՝ Ուսում. Մեղրի՝ Օր. Գոհարիկ Սիմոնեանց, Օրդուբատ՝ Արտաշէս ալ. Աւետիսեան, Ղազար Գ. Բաբայեան, Դաւիթ Վ. Այվազեանց, Դրիգոր Յ. Սուլխանեանց, Պետերզորսի՝ Մազիտաիրէ Բուզեանց. Ղարաքիլիսայ՝ Տէր-Արսէն աւագ-քահանայ Տէր-Սիմէօնեանց, Յորդն-քահանայ Խաչատրեանց, Ուսուց. Իսահակ Ազատեանց, Սոսի Արսէնեան, Ներսէս Նազարէթեանց, Աղէքսանդր Յ. Աբոյեան, Հայրապետ-բէկ Մուրադխանեանց, Աւետիս Խումայեան, Ատուռածատուր Գ. Կաղարեցեանց, Նըսմիա Նալբանդեանց, Ատուռածատուր Տէր-Մկրտչեանց, Յովհաննէս-քահ. Մխիթարեանց, Յովհաննէս քահ. Թամարեանց, Յովհաննէս քահ. Վիրաբեանց, Ուսուցիչ. Միքայէլ Տէր-Յարութիւնեան. Եզոր Եղշատեանց: Բազէ՝ Պետրոս Բ. Տէր-Մարկոսեան, Սարգիս Ղոնեանց, Բ. Յակոբեան Լեւոն Փիլիպպոսեան, Վլադիկաւկազ՝ Բօղոս Սոմխեան, Ս. Էջմիածին Դաբ. Սմբատեան, Լազօրեխ, Արտ. Վաչեանց, Ռոստով Դոնի վրայ, Յով. Նասիբեկեանց Ղարս, Գր. Այտազեան, Արմաւիր՝ Նիկ. Զումպեան, Ջերնեզով՝ Դրիգոր Աղուլեան, Սուխում. Տէր-Մկ. ք. Մինասեանց, Ն. Նէնաթեանց, Օշիմշերի Գր. Քեսբիեանց, Թաւրիզ՝ Յով. Ալեանց, Ադ. Տէր-Օհանեան, Սար. Ոնտանեան, Մատ. Գրիգորեանց, Սօսխ-Բուլաղ Յար. Ծերունեան: Աղէքսանդրօպոլ Տէր-Մեսր. ք. Դուլումեան:

—

ԱՐՕՐ

Ալեքսանդրեանական տպարանի
Մամուլի տակից լոյս տեսան

Ա.

Ց. ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ԿԵՆԱՔԸ
ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ս. ք. ԲԵՂՆԱՊԱՐԵԱՆԻ
ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Գ.

ՏԵՍԻԼ
ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԽԱՉԻ
Աշխ. Ամէն Ա. Պ.-Վարդապետեանց

Մամուլի տակ են.

Ա.

Բժ. Դր. ՏԷր-Պետրոսեանի
ՀԱՆՐԱՄԱՏԶԱԼԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
II տեւորակ.

Բ.

Արշակ Մեհրաբեանի
ՓՈՔՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Գ.

Թիֆլիսի Ընկ. Հայ. Դրք. Հրատ.
ՔԻՄԻԱ
Պրօֆեսսօր Բօսկօի
Թարգ. Ա. Մ. Ա.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ.

ԳԱՍԱԳԻՐՔ

Հայոց Հոգեւոր Իրկպասեան գալստեանց վերջին՝ եւ Թեոփանեան գալստեանց սուրբն եւ միջին գաւառականաց՝ սրպէս եւ Պետական գալստեանց վերջին գաւառականաց Համար։

ԱՇԽԱՏԱՍՏԻՐԵՑ

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԲԼՂՇԱՄԱՐԵԱՆՑ

ԿՐՕՆԱՒՈՐՈՑ ՆԵՐՔԻՍԱՏԱՆ ՀԱՅՈՑ ՀՈՎՆԻՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻՆ ՑՓԽՈՒՄԻ

ԳԻՆԸ Լ ԿԱԶՄՈՎ 60 Կ.

ԱՆԿԱԶՄ 50 Կ. 1—2